



Հ. ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՀԱՆԱՇԵԱՆ
(1908 - 1974)



Տ Ա Պ Ա Ն Ա Գ Ի Ր

Կրօնաւոր երկիւղած ու բարեպաշտ, քահանայ հոգեւէր ու անբասիր, վարդապետ ներհուն եւ աստուածանուէր, որ քառասնամեակ մը ամբողջ, իբրեւ կանթեղ լուսաշող, ցոլաց լոյսովն իր հոգիին ու սրտին, ի սպաս Սուրբ Եկեղեցւոյ, Ազգին եւ Ուխտին:

Խանդավառ դաստիարակ եւ տեսուչ՝ Մուրատ-Ռաֆայէլեան վարժարաններու մէջ, անխնայ ուսուցիչ Մեսրոպեան լեզուի եւ հայրենի գրականութեան, վաստակաւոր ու բազմահմուտ խմբագրապետ, տենչերովն իր լուստես՝ ցանց սերմեր լիաբուն, լուսատենչ հոգիներու ակօսներուն մէջ արգաւանդ:

Մուսաներու լուսադիւրին ջինջ ակերէն արբեցած՝ հոգետաւիղ բանաստեղծ, խռիւն գրագէտ, կորովի քննադատ ու շնորհալի թարգմանիչ, գեղեցիկի նուրբ հաշակով օծուն, մագաղաթի հագարամեայ էջերէն գոյներ առած վարդանկար՝ սփռեց ծիածան երփներանգ, հայ ըսփիւռփի հորիզոնին վրայ պայծառ:

Սիրող մեծղի գործերու, նկարագրով ձեռներէց, Մխիթարեան դարաւոր տպարանին տուաւ նոր զարկ եւ ոգի, օժտելով զայն բաժիններով նորաշէն, կազմութեամբ արդիաշունչ, մշակոյթի գերդ վառարան ազգանուէր, մեծ Հիմնադրին լուսանորոգ ուղիով:

Նուիրագործելով մէն մի վայրկեանն իր կեանքին, վաճառական սեռեակի լուրջեան մէջ առանձին, ուշ գիշերներ տփնաջան, խնկարոյր աղօթփի վերածեց աշխատանքին իր երկար, յափշտակուած Շնորհալեան շարականի դիւքանքէն, երկնային յայտնութեան անհատ խորհուրդին արքուն սպասարկու:

Ու յանկարծ ծագեցաւ հրաժեշտի այգն անսպաս, Զատնական արշալոյսին ցոլփերով, եւ Աստուծոյ հաւատարիմ այս ծառան, որպէս մշակ լիախնայ, վաստակներով քեռնաբարձ, լուսապայծառ հրեշտակին հետ արփաթեւ, թընաւ երկրէս, հանգչելու տենչալի տեսիլքին մէջ յաւիտեան:

Հ. Ն. Տ. Ն.